

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Եզն ու շունը

Մեկ չաղ շուն ընկած՝ ախոռի մոտին,
Հով տեղը ձգված՝ անսաս, իր քեֆին,
Իր սիրուն օրը անց էր կացնում.
Որ մեկ խեղճ եզը իրիկվան մթնումն
Հանդիցն էկավ տուն ու գոմը մտավ,
Բերնի ջուրն գնաց, խոտը որ տեսավ:
Շատ բանելուցը ոսկոռն ու կաշին
Իրար էին կպել: Ու խեղճն էս հալին
Մոտացավ, մի քիչ բերանն ե՛մ քցի,
Շունը մոռաց, չթողեց, որ ուտի:
«Տո անիրո՛վ դու՝ քեզ ի՞նչ ա պակսում»:
Ասեց մեր եզը. «Դու է՞լ ես հաչում:
Սաղ օրը հոգիս արևի տակին՝
Հանդը վարելիս կրակի առաջին՝
Հո դուս է գալիս: Ու դու քեզ համար
Էս շվաք տեղը ընկած մուղարար,
Էնքան ես ուտում, խմում, քեֆ անում,
Որ հենց էն ա հա՝ ճաքում ես տրաքում:
Ի՞նչ քո խարջ բան ա էս չորացած խոտն.
Որ չես ուզում, ես էլա գնամ մոտն»:—
Ա՛խ, ով չի գիտի՝ նախանձոտ մարդի

Աչքը կրակ ա ու սիրտը լեղի:
Լավ օրը տեսնի, սիրտը կտրաքի,
Վատդ լսելիս՝ մի թիզ կըեղվի:—